«Հաստատում եմ»
Դպրոցի տնօրեն՝ _____ Ս. Պողոսյան
30. 08. 2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ № 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 5-րդ^{Բ} ԴԱՍԱՐԱՆԻ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հակոբյան Անահիտ Վոլոդիայի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

2023 – 2024 թթ. ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Դասարանի ընդհանուր բնութագիրը ուսումնական տարվա սկզբին .

5ᵉ դասարանում սովորում է 35 աշակերտ՝ 21 աղջիկ, 14 տղա: Ուս. Տարին սկսում ենք բարեհաջող, դասարանում ձևավորված է կոլեկտիվիզմը, տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Ձևավորված է դասարկանական ակտիվ: Աշակերտական ակտիվի և ծնողական խորհրդի ջանքերով ձևավորվել է ընկերասիրության, փոխադարձ օգնության և հանդուրժողականության կուռ միասնություն:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

Ձևավորել դասարանական անկյուն, կանխել բացակայությունները, խստիվ պահպանել կարգապահությունը, հետևողական լինել ուսումնական որակին, դասարանում կարգապահական նորմերի, հերթապահության, հասարակական աշխատանքների կազմակերպում և իրագործում: Դպրոցական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում և անցկացում: Ծնողների ներգրավվում ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ամուր և համերաշխ դասարանական և ծնողական կոլեկտիվի ձևավորմանը միտված աշխատանքների իրականացում:

3 . Հայեցի դաստիարակություն.

3.1. Հոգևոր դաստիարակություն. Ձևավորել և ամրապնդել աշակերտների գիտելիքները հոգևոր արժեքների նկատմամբ: Ունենալ այնպիսի գաղափարախոսություն, որ սիրեն հայրենիքն ու ազգը, պետությունն ու պետականությունը, եկեղեցին: Գլոբալիզացիայի դարաշրջանում ամուր պահպանեն հայկական ավանդույթները, արժեքներն ու դրանց նշանակությունը, ամուր պահել ազգայինը և հաճախակի անցկացնեն բազմաբովանդակ զրույցներ:

3.2. Գեղագիտական դաստիարակություն.

Սովորողների մեջ ամրապնդել գեղագիտական բարձր ճաշակ, անցկացնել զրույցներ, կազմակերպել տեսահոլովակների, մշակութային հաղորդումների դիտում, քննարկում: Էքսկուրսիաներ դեպի պատմական վայրեր, թանգարաններ, թատրոն: Ձևավորել մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձ

(4) 3.3. Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն.

Առաջնորդվել հետևյալ կարգախոսով. **Ով չի ճանաչում իր հայրենիքը՝ չի կարող ճշմարտապես սիրել այն:** Կազմակերպել քննարկումներ հայրենասիրական թեմաներով: Ձևավորել բնավորության այն գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը, հաճախակի խոսել մերօրյա հերոսների մասին:

5. Ֆիզիկական դաստիարակություն.

Ֆիզիկապես ուժեղ, կոփված ու մարտընչող հայ կերպարը դարձնել սովորողների դաստիարակության գլխավոր առանցքը: Անցկացնել զրույց-քննարկումներ սպորտային հաջողություններ գրանցած մարզիկների մասին:

6. Աշխատանքային դաստիարակություն.

Յուրաքանչյուր սովորողի մեջ ամրապնդել աշխատանքի նկատմամբ սերն ու հարգանքը, աշխատասիրությունը գնահատելու գիտակցելու վերաբերմունքը: Գիտակցել, որ բոլոր աշխատանքներն էլ կարևոր են:

7. Բնապահպանական դաստիարակություն.

Բնության հանդեպ սերը դարձնել սովորողների բարձրարժեք մտածողության մի մասնիկը: Հաճախ կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնություն և տեղում խոսել բնապահպանական խնդիրների մասին: Անցկացնել զրույցներ <<Անտառը երկիր մոլորակի թոքերն է>>, <<Երկրագունդը բոլորիս տունն է>> թեմաներով:

8. Դպրոց-ընտանիք կապը.

Բարձրացնել դպրոցի և ընտանիքի սերտ համագործակցությունը, ծնողների միջոցով տեղյակ լինել յուրաքանչյուր աշակերտի ընտանեկան, սոցիալական խնդիրներին և հնարավորինս աջակցել այդ խնդիրների լուծմանը: Սովորողների մոտ ձևավորել այն միտքըմ որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ

շաբաթներ		
I	Գիտելիքի օր	01/09/2023 թ.
II	Ազնիվ ու անկեղծ հարաբերություններ մեր դասարանում	06/09/2023 թ.
III	Անվտանգ երթևեկություն	13/09/2023 թ.
IV	Անկախ Հայաստանի զավակն եմ	20/09/2023 թ.
V	Ի՞նչ է բնական աղետը	27/09/2023 թ.
VI	Սիրելի ուսուցիչ	04/10/2023 թ.
VII	Դասարանական ժողով	11/10/2023 թ.
VIII	Ի՞նչ է ազնվությունը	18/10/2023 թ.
IX	Մարդու իրավունքները: Ի՞նչ է իրավունքը	01/11/2023 թ.
X	Ի՞նչ են սովորեցնում մեզ Թումանյանի հերոսները	08/11/2023 թ.
XI	Առաջին բուժօգնություն	15/11/2023 թ.
XII	Մարդիկ, որոնց հանդիպում եմ ամեն օր	22/11/2023 թ.
XIII	Սպիտակի երկրաշարժ	29/11/2023 թ.
XIV	Ազնիվ ու անկեղծ ընկերություն	06/12/2023 թ.
XV	Լավ և վատ արարքներ	13/12/2023 թ.
XVI	Ամանորի և Սուրբ Ծնունդի խորհուրդները	20/12/2023 թ.
XVII	Հայոց Բանակի 32-ամյակը	10/01/2024 թ.
XVIII	Ի՞նչ է ընկերասիրությունը	17/01/2024 թ.
XIX	Եկեղեցական տոներ. Տեարնընդառաջ	24/01/2024 թ.
XX	Մեր փոքրիկ և թանկագին բարեկամները	31/01/2024 թ.
XXI	Աշխատանքը ազնվացնում է մարդուն	07/02/2024 թ.
XXII	Ի՞նչ է քաղաքաշտպանությունը	14/02/2024 թ.
XXIII	Կանանց միջազգային տոն	21/02/2024 թ.
XXIV	Ինչու՞ պետք է հանդուրժեմ	28/02/2024 թ.
XXV	Ինչպե՞ս խուսափել կոնֆլիկտներից	06/03/2024 թ.
XXVI	Ավետման տոն	13/03/2024 թ.
XXVII	Գարունն իմ քաղաքում	20/03/2024 թ.
XXVIII	Հայոց Մեծ եղեռն	03/04/2024 թ.
XXIX	Բակային խաղեր	10/04/2024 թ.

XXX	Հաղթական մայիս	17/04/2024 թ.
XXXI	Ընտանիքս իմ տաքուկ անկյունն է	24/04/2024 թ.
XXXII	Մեր սիրելի տատիկներն ու պապիկները	01/05/2024 թ.
XXXIII	Իմ ձեռքբերումները և բացթողումները	08/05/2024 թ.
XXXIV	Ուսումնական տարվա ամփոփում	15/05/2024 թ.

Դասղեկ՝ /Ա. Հակոբյան/